



Հ Ր Ա Մ Ա Ն

«17» հունվարի 2020 թվական N Կ14-Ա

ՀՌԻՓՍԻՄԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՓՈՐՁՆԱԿ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 439-Ն որոշման 24-րդ և 25-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1940-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետը՝

Հրամայում եմ.

1. Հռիփսիմե Զորակի Վարդանյանին 2020 թվականի հունվարի 20-ից մինչև հուլիսի 20-ը ներառյալ գրանցել որպես փորձնակ՝ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնում:

2. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնի գլխավոր մասնագետ-տեսուչ Գագիկ Սարգսյանին նշանակել սույն հրամանի 1-ին կետում նշված փորձնակի աշխատանքները համակարգող:

3. Հաստատել փորձնակի աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

X

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

